

1.2.2. *Գյուղատնտեսություն*

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2000թ. հունվար-նոյեմբերին, փաստացի գներով, բոլոր գյուղական համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7000 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի տվյալներով, կազմել է 260.0 մլրդ. դրամ, որը 1999թ. մակարդակին զիջում է 2,6 տոկոսով, 2000թ. նոյեմբեր ամսվա համախառն արտադրանքը կազմել է հոկտեմբեր ամսվա 63,9 տոկոսը (համադրելի գներով): Գյուղատնտեսության համախառն արտադրանքի նվազումը հիմնականում պայմանավորված է նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատությամբ բուսաբուծության համախառն արտադրանքի նվազմամբ, որը 1999թ. մակարդակին զիջել է 10.9%-ով, իսկ անասնապահության համախառն արտադրանքը գերազանցում է 1999թ. մակարդակը 7,6 տոկոսով: Բուսաբուծության համախառն արտադրանքի նվազումը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ բացատրվում է տևական երաշտով, որի հետևանքով նախորդ տարվա համեմատությամբ զգալի պակասել են հացահատիկային մշակաբույսերի համախառն բերքը, որը կազմել է նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի 75,4%-ը, կարոտֆիլինը՝ 68,4%, բանջարեղենինը՝ 91,9% և բոստանային մշակաբույսերինը՝ 63,0 տոկոսը:

Հանրապետությունում ավարտվել են աշնանացան մշակաբույսերի ցանքի աշխատանքները: 2000թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ գյուղական համայնքների և առևտրային կազմակերպությունների կողմից ներկայացված վիճակագրական հաշվետվությունների օպերատիվ տվյալներով կատարվել է 69941 հեկտար աշնանացան մշակաբույսերի ցանք, որը կազմել է նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի 80,9 տոկոսը:

Աշնանացան մշակաբույսերի ցանքը հանրապետությունում, մարզերի կտրվածքով, 2000թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ

(*հեկտար*)

Մարզերի անվանումը	Կատարված է աշնանացան	
	01.12.2000թ. դրությամբ	01.12.2000թ. %-ով 01.12.1999թ. նկատմամբ
Արագածոտն	1413	31,8
Արարատ	10663	92,5
Արմավիր	15309	111,3
Գեղարքունիք	4380	63,0
Լոռի	5655	70,7
Կոտայք	4939	61,9
Շիրակ	10755	54,3
Սյունիք	10386	125,2
Վայոց Ձոր	1200	81,1
Տավուշ	4936	125,2
ք. Երևան	305	91,3
ԸՆդամենը ՀՀ	69941	80,9

Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատությամբ աշնանացանի նման իրավիճակը հիմնականում պայմանավորված է աշնանացան մշակաբույսերի սերմացուի պակասով:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունն 2000թ., ընտրանքային կարգով, հանրապետության մարզերի 200 համայնքների 7000 տնտեսություններում անց է կացրել հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի որակի հետազոտություններ:

Բերքահավաքի որակի ընտրանքային հետազոտության մեջ ընդգրկված գյուղական համայնքների (200) հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները կազմել են

հանրապետությունում հացահատիկային մշակաբույսերի ընդհանուր տարածքի 15,4 տոկոսը:

Հետազոտությամբ ընդգրկված տնտեսություններում բերքահավաքի ընթացքում հացահատիկային մշակաբույսերի կորուստները 1 հեկտարից միջին հաշվով կազմել են 128 կգ (նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի 116կգ-ի դիմաց), որը կազմում է հետազոտված տնտեսությունների հացահատիկային մշակաբույսերի 1 հեկտարից ստացված միջին բերքատվության 7 տոկոսը:

Ընտրանքային հետազոտման արդյունքներով բերքահավաքի ժամանակ ստացված հացահատիկի բերքի կորուստները հանրապետության միջին կորուստից զգալիորեն բարձր են Կոտայքի մարզի հետազոտված տնտեսություններում՝ 364 կգ, Շիրակի մարզում՝ 239 կգ, Արագածոտնի մարզում՝ 206 կգ, Արարատի մարզում՝ 158 կգ և այլն:

Հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի ընթացքում կորուստների զգալի մասը, ինչպես նախորդ տարիներին, տեղի են ունեցել բերքահավաքի տեխնիկական պարկի բարոյական մաշվածության պատճառով, քանի որ այն գրեթե չի նորացվում:

Ընտրանքային հետազոտության արդյունքների հիման վրա կատարված հաշվարկներով, բերքահավաքի ընթացքում, հանրապետության առումով հացահատիկի բերքի կորուստները միջին հաշվով կազմել են մոտ 24,0 հազար տոննա, որը կազմել է ընթացիկ տարում արտադրված հացահատիկային մշակաբույսերի մոտ 11,1%-ը կամ մոտավորապես այնքան, որքան ընթացիկ տարում արտադրվել է Շիրակի մարզի տնտեսություններում:

Բացի այդ, ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից հանրապետության մարզերում կատարված ուսումնասիրություններից պարզվել է, որ 2000թ. տևական երաշտի հետևանքով հանրապետությունում հացահատիկի բերքի կորուստը կկազմի ավելի քան 100,0 հազ. տոննա (կամ 7,3 մլրդ.դրամ):

Այսպիսով, 2000թ., ընդհանուր առմամբ, տևական երաշտի և բերքահավաքի ժամանակ հացահատիկային մշակաբույսերի համախառն բերքի կորուստը հանրապետությունում կազմել է մոտ 124,0 հազ.տոննա:

Անասնապահական մթերքների արտադրությունը հանրապետությունում, մարզերի կտրվածքով, 2000թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ

Մարզերի անվանումը	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով), հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2000թ.	2000թ. %-ով 1999թ. նկատմամբ	2000թ.	2000թ. %-ով 1999թ. նկատմամբ	2000թ.	2000թ. %-ով 1999թ. նկատմամբ
Արագածոտն	10,0	114,9	54,9	100,4	24,2	114,2
Արարատ	5,9	113,5	31,4	100,6	23,7	110,2
Արմավիր	6,0	115,4	31,2	100,0	39,0	113,7
Գեղարքունիք	14,0	114,7	78,0	100,3	18,2	113,7
Լոռի	10,2	115,9	54,9	100,4	15,6	116,4
Կոտայք	7,7	113,2	42,2	100,5	99,1	126,9
Շիրակ	11,2	115,5	61,7	100,3	29,0	112,4
Սյունիք	7,8	116,4	39,9	100,2	20,5	113,9
Վայոց Ձոր	4,2	113,5	21,8	100,5	20,1	117,5
Տավուշ	7,2	114,3	34,5	100,3	20,9	112,4
ք.երևան	0,7	116,7	3,2	100,0	31,1	117,8
Ընդամենը ՀՀ	84,9	115,2	453,7	100,4	341,4	117,6

Բերված տվյալները վկայում են, որ գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7000 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի հաշվարկային տվյալներով, 2000թ. հունվար-նոյեմբերին իրացվել է 84,9 հազ. տոննա (կենդանի քաշով) անասուն և թռչուն, որը գերազանցում է 18

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

1999թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշը 11,2 հազ. տոննայով կամ 15,2%-ով, կաթի արտադրությունը նույնպես գերազանցում է 1999թ. նույն ժամանակաշրջանի մակարդակը 1,6 հազ. տոննայով կամ 0,4%-ով, իսկ ձվինը՝ 51,1 մլն. հատով կամ 17,6%-ով:

Հարկ է նշել, որ 2000թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ մսի իրացված ծավալների աճը հիմնականում պայմանավորված է անասնակերի պակասով (երաշտի հետևանքով), ինչի պատճառով ավելացել է անասնազլխաքանակի սպանդը (մորթը):